



ԵՐԿՈՒԵԱԲԹԻ, 22 ԱՊՐԻԼ, 2024

ՏԵՐՈՒՆԱԿԱՆ ԱՊՈԹՔ

(միասնաբար արտասանուած)

Իմաստութիւն Հօր Յիսուս, փոքր ինձ իմաստութիւնս վարիս խորհել եւ խօսել եւ գործել առաջի քո յամենայն ժամ. ի չար խորհրդոց, ի բանից եւ ի գործոց փրկեալսսս. եւ ողորմեալ քո արարածոց եւ ինձ բազմամեղիս: Ամէն:

ՍԱՂՄՈՍ 119

ՀՆԱԶԱՆԴՈՒԹԻՒՆ ԱՍՏՈՒԾՈՅ ՕՐԷՆՔԻՆ

Երիտասարդ մը ինչո՞վ կրնայ ինքզինք մաքուր պահել.

եթէ ոչ՝ քու խօսքերդ գործադրելով:

Ամբողջ սրտով կ'ուզեմ քեզի հնազանդիլ.

մի ձգեր որ պատուէրներէդ խոսորդիմ:

Խօսքդ սրտիս մէջ պահեցի,

որպէսզի չըլլայ որ քեզի դէմ մեղանչեմ:

Օրհնեալ ես դուն, Տէր,

ստրվեցուր ինձի քու կանոններդ:

Շրթունքներս անդադար պիտի կրկնեն

բերնէդ դուրս եկած ամէն մէկ վճիռ:

Հաճոյք կ'առնեմ պատուիրաններդ կարարելէն,

բոլոր փեսակի հարստութիւններէն աւելի:

Հրահանգներդ են մտածումս առանցքը,

ուսուցումներդ՝ ուշադրութեանս առարկան:

Կանոններդ են ինձի հաճոյք փուռողը,

եւ խօսքերդ բնաւ պիտի չմոռնամ:

ՇԱՐՎԱՆ

Սուրբդ սրբոց Երրորդութիւն, զՄեզ մաքրեալ քեզ բնակութիւն.

Շնորհեա ընդ մանկանցն առազատի Հանգչիլ ընդ քեզ ի յանկողնի.

Տուր զհայցուած բարեկամին զՓոխ երից նկանակին.

Չի ի տուրնջեան և գիշերի Տացուք քեզ փառս անլռելի:

Երևելի լոյս ստեղծեր, զՏիւ և զգիշեր բաժանեցեր.

Ծագեա մեզ. Տէ՛ր, ի գիշերի զճառագայթս իմանալի.

Տուր յամենայն ժամանակի զՊահպանող աջ քո հովանի.

Չի ի տուրնջեան և գիշերի Տացուք քեզ փառս անլռելի:

Սիրոյ քո հուր արկեալ յերկիր՝ Բորբոքեացի ի հոգիս մեր.

զԽորհուրդ սրտից մեր մաքրեացէ՝ զԼոյս գիտութեան քո փայլեացէ.

Ի քնոյ մահու զմեզ զարթուացէ, զՄիտս բոցով քո վառեացէ.

Չի ի տուրնջեան և գիշերի Տացուք քեզ փառս անլռելի:

ԱՊՈԹՔ

Տէր, ըրէ այնպէս՝ որ սիրտս քու սիրովդ եւ քաղցրութեամբդ լեցուի, եւ ես ալ քու բարութեանդ ցոլացումը ըլլամ շրջապապիս մէջ: Խեղճն ու փկարը ուրնակոխ չընեմ, ցաւին ու փազնապին անտարբեր չմնամ, այլ՝ քու քաղցր ցօղը ըլլամ, եւ անժպիտ մարդոց ժպիտ մը բերեմ, անուրախ մարդոց սիրտը ուրախացնեմ, յուսահատ մարդոց յաւիտենական կեանքի յոյսը փամ, անսէր մարդոց սէր բաշխեմ, սառնացեալ սիրտերը սիրովդ ջերմացնեմ, եւ քու սուրբ անունովդ կնքեմ եւ քեզի համար կամարեմ ու փաճարացնեմ անոնց հոգիները: Ամէն:

ՀԱՐԱԿԱՆ - ՍՈՒՐԲ ԱՍՏՈՒԿ

Սուրբ Աստուած, սուրբ եւ հօր, սուրբ եւ անմահ, որ յարեար ի մեռելոց, ողորմեա մեզ: (X 3)

Փրկել զմեզ ի փորձութենէ եւ յամենայն վտանգից մերոց:

Եւ եւս խաղաղութեան զՏէր աղաչեսցուք:

Վասն լսելի լինելոյ Տեառն Աստուծոյ ձայնի աղաչանաց մերոց՝ բարեխօսութեամբ սուրբ Աստուածածնին, եւ իջանելոյ ի վերայ մեր ողորմութեան եւ գթութեան Տեառն Աստուծոյ: Ամենակալ Տէր Աստուած մեր, կեցո՛ւ եւ ողորմեա՛:

ՀԱՐԱԿԱՆ-ԱՐՈՐՔ

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Տէր ողորմեա:

Վմենասուրբ Երրորդութիւն, տուր աշխարհիս խաղաղութիւն:

Եւ Հիւանդաց բժշկութիւն, ննջեցէրոց արքայութիւն:

Արի Աստուած Հարցն մերոց, որ ապաւէն ես նեղէրոց:

Տէր ողորմեա, Տէր ողորմեա, Յիսուս Փրկիչ մեզ ողորմեա:

ՍԱՂՄՈՍ 60

ՕԳՆԷ ՄԵԶԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Ով Աստուած, մերժեցիր մեզ,

բարկացար եւ փեղահան ըրիր մեզ. ալ փուն դարձուր մեզ:

Դուն սարսեցիր մեր երկիրը, կտոր-կտոր ըրիր զայն.

արդ, դարմանէ անոր վերքերը, որ չըլլայ թէ կործանի:

Քու ժողովուրդիդ նեղութիւններ ցոյց փուիր,

դառնութեան գինի խմցուցիր մեզի:

Քեզմէ ակնածողներուն նշան մը փուիր,

որպէսզի անով ազափին մահուան ճիրաններէն:

Նեղութենէն դուրս բեր մեզ՝ սիրելիներդ,

լսէ մեր աղօթքները եւ զօրութեամբդ փրկէ մեզ:

Աստուած այսպէս խօսեցաւ իր սրբարանէն.-

«Իմս է յաղթանակի ցնծութիւնը. ես բաժիններու պիտի վերածեմ

եւ իբրեւ ժառանգութիւն՝ ժողովուրդիս պիտի փամ

Շեխեմ քաղաքը եւ Սուքքոթի հովիտը:

Իմս է Գիլեադը, իմս է Մանասէն.

Եփրեմը իմ սաղաւարտս է,

Յուդան՝ թագաւորական մականս:

Մոաբը այն կոնքն է, որ կը գործածեմ լուացուելու համար,

Եդոմը այն երկիրը՝ որուն վրայ կը փարածեմ իշխանութիւնս.

իսկ Փղշպացիներու երկրին ենթարկումին համար ցնծութեամբ կ'աղաղակեմ»:

Ո՛վ զիս պիտի փանի պարսպաւոր քաղաքը,

ո՛վ զիս պիտի առաջնորդէ դէպի Եդոմ,

եթէ ոչ՝ դուն, ով Աստուած, որ այժմ մերժեր ես մեզ,

եւ մեր բանակներուն չես ընկերանար, ով Աստուած:

Օգնէ մեզի մեր թշնամիներուն դէմ,

որովհետեւ զուր է մարդոց օգնութիւնը:

Մենք Աստուծմով պիտի յաղթենք,

Աստուած ինք պիտի ընկճէ մեր ոտիսները:

Պահապան ամենայնի Գրիստոս,

աջ ճո հովանի լիցի ի վերայ իմ ի տուէ եւ ի գիշերի,

ի նստիլ ի տան, ի գնալ ի փանապարհ,

ի ննջել եւ ի յառնել, զի մի երբեք սասանեցայց.

եւ ողորմեա՛ ճո արարածոց եւ ինձ բազմամեղիս:



ՕԳՆԷ ՄԵՋԻ ԹՇՆԱՄԻՆԵՐՈՒՆ ԴԷՍ

Դաւիթ անձնական խնդրանքը կը վերածէ ժողովրդային խնդրանքի: Դաւիթ որպէս մաս եւ բաժին այդ ժողովուրդին, աղօթք կը բարձրացնէ առ Աստուած խնդրելով, որպէս ժողովուրդին ներկայացուցիչը, որ Աստուած փուն վերադարձնէ զիրենք, դարմանէ այդ ժողովուրդին վերքերը, որ ջրլլայ թէ կործանի:

Աստուած Իրեն համար սեփական ժողովուրդ է որ ուզեց պարտասպել, բայց ամէն անգամ որ այդ ժողովուրդը խտրորեցաւ, ամէն անգամ որ այդ ժողովուրդը մեղք գործելով հեռացաւ Աստուծմէ, Աստուած փարբեր-փարբեր ձեւերով ուզեց յանդիմանել այդ ժողովուրդը, մերժեց, բարկացաւ, փեղահան ըրաւ, որպէսզի դարձի գայ, զգաստանայ, եւ ապաշխարութեամբ՝ եր վերադառնայ ու վերականգնուի: Դաւիթ կը դիմէ Աստուծոյ ի մրի ունենալով Աստուծոյ փուն խոստումը: Եթէ Աստուած խոստացած է պահել, ուրեմն կը պահէ, Աստուած եթէ խոստացած է ազատել, ուրեմն կ'ազատէ, պայմանաւ սակայն, ժողովուրդը անդրադառնայ ու ապաշխարութեամբ եր Աստուծոյ վերադառնայ: Երբ Իսրայէլը պարտութիւն կը կրէ, Դաւիթ այդ պարտութեան մէջ կը փեսնէ Աստուծոյ մերժումը Իր ժողովուրդին, եւ Անոր բարկութիւնը: Այս բոլորով յանդերձ սակայն, Դաւիթ կը խնդրէ որ Աստուած եր փուն դարձնէ, ու ժողովուրդին վերքերը դարմանէ, որ ջրլլայ թէ կործանի: Ասոր գեղեցիկ օրինակը մենք կը փեսնենք մարգարէական գիրքերուն մէջ, ամէն անգամ երբ ժողովուրդը կամակորութեամբ կը խտրորէր եւ Աստուծմէ կը հեռանար մեղքի պարճառով, Աստուած միջոց մը կ'օգտագործէր արթնցնելու այդ ժողովուրդին: Եթէ հարցնենք ինչո՞ւ, ապա Եղեկիէլի մարգարէին Աստուած կ'ըսէ. «Ես մեղաւորին մահը չոմ ուզեր, այլ անոր դարձը եւ փրկութիւնը»: Ուրեմն, խորքին մէջ, Աստուած մեղաւորին մահը չուզէր, այլ կ'ուզէ որ այդ մեղաւորը իր սխալ ճամբէն վերադառնայ: Իսկ Եսայի մարգարէին ճամբով այնքան գեղեցիկ ձեւով կ'արտայայտուի ըսելով. «Այս ժողովուրդը դաստիարակելու համար, հիւսիսէն գաւազան մը պիտի հանէ» Եսայի 10: Բայց այդ գաւազանը եթէ հպարտանայ, այդ գաւազանը պիտի կտրեն: Այս Սաղմոսը նաեւ մարգարէական Սաղմոս է, որ գալիքին պարկերացումը պիտի փայ, որովհետեւ Իսրայէլ իր մեղանչումին պարճառով մինչեւ իսկ Բաբելոն գերութեան պիտի փարուի Եթթանաստուն փարի:

Աստուծոյ խոստումն է, որ եթէ ժողովուրդը անդրադառնայ, զիտակցի ու ապաշխարութեամբ վերադառնայ Ես պարտաս եմ, կ'ըսէ Տէրը, այս ժողովուրդին մեղքը սրբելու: Ահա, Եկեղեցւոյ դերը այս իսկ է երկրի վրայ ըլլայ աղ եւ լոյս, ինչպէս պիտի ըսէր Քրիստոս, դուք էք երկրի աղը եւ աշխարհի լոյսը: Աղով այդ մեղքին պարճառաց վերքին վրայ դնելու եւ անով բուժելու, եւ լոյսով Աստուծոյ առաջնորդելու: Եւ այդպէս ալ է յաճախ, հազիւ քիչ մը նեղութիւն եւ դժուարութիւն, անմիջապէս կը սկսինք աղօթելու, եկեղեցի երթալու, մոմ վառելու, մինչեւ որ անցնի պարտուհասը, սակայն, այդ պարտուհասը անոր համար չէր, որ մենք աղօթք ընէինք, երեկեցի երթայինք, մոմ վառէինք, այլ անոր համար էր որ մենք դարձի գայիքն, Աստուծոյ վերադառնալու նպատակով: Ահա ճիշդ անոր համար է, որ Դաւիթ կ'ըսէ. «Քու ժողովուրդիդ նեղութիւններ ցոյց փուր, դառնութեան զինի խնցուցի, բայց այս բոլորը իբրեւ նշան նաեւ փուր, Քեզմէ ակնածողներուն», այսինքն՝ անոնք որոնք Աստուծոյ ակնածանքը ունին, այսինքն՝ Աստուծոյ երկիւղը, անոնք կրնան հասկնալ ու ըմբռնել այս նեղութիւններուն նպատակը, որպէսզի մահուան ճիրաններէն ազատին: Դաւիթ կը խնդրէ, որ Աստուած դուրս բերէ այս նեղութենէն, լսէ աղօթքները եւ Իր գորութեամբը փրկէ զիրենք: Ահա որքան Իսրայէլի համար, նոյնքան նաեւ այսօր մեզի համար: Այսօր մենք որքան կարիքը ունինք Աստուծոյ վերադառնալու, այսօր որքան հեռացեր ենք Աստուծմէ: Եւ ինչեր է որ կու գայ մեր գլխուն, սակայն, որքանով կ'անդրադառնանք որ այդ եղածները նշաններ են, դարձի գալու: Այնպէս ինչպէս Եգիպտոսի վրայ եկած հարուածները խորքին մէջ ինչ էին եթէ որ նշաներ, որպէսզի Փառաւոն դարձի գար, բայց եկուր փես, որ ընդհակառակը, փոխանակ դարձի գալու սիրտը ատի կարծրացուց, եւ աւարտին ուրիշ հարուած չմնաց, եթէ ոչ անդրանիկներուն մահը: Եւ այս պարագային, Փառաւոնին համար անդրանիկներուն մահը, ուրիշ բան չէր եթէ ոչ Փառաւոնին թագաւորութեան կործանումը, որովհետեւ անոր անդրանիկին մահը, այսինքն՝ գահաժառանգին, թագաժառանգին մահը:

Ուրեմն, այս փողերը կու գան թելադրելու, թէ ինչ որ բաներ կը պարտախին մեր կեանքին մէջ, որպէս նեղութիւն, դժուարութիւն, կամ այսպէս ըսած պարիժ, խորքին մէջ անոնք զգաստութեան առիթներ են, մեզ հրաւիրելու ապաշխարութեան, գոջումի, որպէսզի Աստուած ալ Իր փուն խոստումին համաձայն եր փուն վերադարձնէ, մեր վերքերը դարմանէ, որպէսզի չկործանինք, ու մեզ ազատէ մահուան ճիրաններէն: Այս բոլորը, խորքին մէջ, որպէս Աստուծոյ սիրոյ արտայայտութիւնը: Ինչպէս

պիտի ըստ Պօղոս Առաքեալ, «Եթէ Աստուած ձեզ յանդիմանէ, մի նեղուիք, որովհետեւ կը նշանակէ, որ իբրեւ Հայր ձեզ կը սիրէ»: Այստեղ ալ Դաւիթ կ'արտայայտուի ըսելով. «Նեղութենէն դուրս բեր սիրելիներդ»: Միւս կողմէ, երբ նեղութեան եւ դժուարութեան մէջէն կ'անցնինք երբեք չմտածենք, որ Աստուած ուրեմն լքած է մեզ, ուրեմն ալ մեզ չսիրեր, ընդհակառակը Պօղոս Առաքեալ կ'ըսէ. «Ով կրնայ մեզ Քրիստոսի սերէն բաժնել, ոչ հուրը, ոչ սուրը, ոչ սովը, ոչ մէկ բան»: Երկրորդ, չմոռնանք բնաւ, որ Աստուած հաւատարիմ ու ճմարիտ է Իր փրօած խոստումին:

Առաւել եւս, Դաւիթ կը շարունակէ ըսելով. «Որ Աստուած է ամենագօրը, Իրն է յաղթանակի ցնծութիւնը»: Իսկ ո՛վ պիտի առաջնորդէ Դաւիթը պարսպաւոր քաղաք, եթէ ոչ Աստուած Ինք, որ պահ մը մերժեց զինք, որպէսզի այդ մերժումը առիթ ըլլայ ժողովուրդին զգաստանալու եւ վերադառնալու առ Աստուած:

Ի վերջոյ, Դաւիթ կը խնդրէ որ Աստուած օգնէ զիրենք թշնամիներուն դէմ, եւ կը խոստովանի ըսելով. «Զուր է մարդոց օգնութիւնը: Մենք Աստուծով պիտի յաղթանք, Աստուած Ինք է որ պիտի ընկճէ մեր ոսոխները»: Այսօր ալ մենք անհապապէս, կամ իբրեւ ժողովուրդ ունինք այլեւ այլ նեղութիւններ, դժուարութիւններ, եւ կ'ուզենք այս կամ այնձեռով դուրս գալու այդ վիճակէն: Նախ պահ մը մտածենք թէ արդեօք ինչո՞ւ կը պարտաւորուինք այդ բոլորը, արդեօք այդ եղանակները նշաններ են որպէսզի մենք հրաժարինք մեր սխալներէն, մեղքէն ու անօրէնութենէն եւ զոյգումով եւ սպաշխարութեան վերադառնանք առ Աստուած, եւր երկրորդ՝ երբ կ'ուզենք դուրս գալ այդ վիճակին որու է որ կ'ապաւինինք մեր ոյժերուն, կամ մարդոց օգնութեան: Չմոռնանք, Սաղմոսի բառերը, «Եթէ Աստուած չչինէ փունը, ի գուր փեղ կ'աշխարհին գայն շինողները»: